ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4371-Ա « 07 » սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի Հ.2911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ Հ.Հ.6,14,22,33 ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՔԱՆԱԿՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 6-րդ մասով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 28.08.2026թ. հ.Ն/56995-26 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի 30-ի «Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցը հաստատելու մասին» հ.2911-Ա որոշման N1 հավելվածում ընդգրկված ավտոբուսային հ.հ.6,22,14,33 երթուղիները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6	ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ - «ՄԻԿԱ» ՄԱՐԶԱԴԱՇՏ Նոր Խարբերդ («Անուշ» այգեգործական տարածք) (ա.կ) – Մ 15 միջպետական ճանապարհ – Երևանյան - Արտաշատի խճուղիներ – Նորագավիթի 1-ին փող. – Արշակունյաց պող. – Բագրատունյաց փող. - Գ.Նժդեհի հրապ. – Մանանդյան փող. - «Միկա» մարզադաշտ (վ.կ): Հետադարձը նույն ուղեգծով:	28	70	23.9	6	7	11/12	6/4/2 5/3/1	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն

14	ԶԵՅԹՈՒՆ – «ԷՐԵԲՈՒՆԻ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ - Ն.ՉԱՐԲԱԽ Զեյթուն (ս.կ.) - Լեփսիուսի - Զեյթունի 5-րդ - Դրոյի - Պ.Սևակի - Ուլնեցու - Ներսիսյան փ-ներ -Ազատության պ. - Սարալանջի փ. - Աբովյան պուր. - Աբովյան – Մոսկովյան Խանջյան փ-ներ - Տ.Մեծի պ.- Արցախի պ. - Գ.Նժդեհի փ. - Արշակունյաց պ. – Շիրակի - Արարատյան փ-ներ - Ն.Չարբախ (վ.կ.): Հետադարձը՝ Ն.Չարբախ - Արարատյան - Շիրակի փ-ներ - Արշակունյաց պ. – «Էրեբունի» օդանավակայան - Արշակունյաց պ. - շարունակությունը նույն ուղեգծով:	41.6	120	20.8	9	11	13/14	9/7/3 7/5/2	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն
22	ՆՈՐ ՆՈՐՔԻ 9-ՐԴ ՀԱՆԳՎԱԾ - ԷՐԵԲՈՒՆՈՒ ՀԱՆԳՎԱԾ Նոր Նորքի 9-րդ զ/ծ (ս.կ.) - Վիլնյուսի - Մինսկի - Միկոյան - Բ.Մուրադյան փ-ներ - Գայի - Մյասնիկյան պ-ներ - Աբովյան պուր. - Աբովյան - Մոսկովյան - Նալբանդյան - Թումանյան փ-ներ - Մաշտոցի պ. – Պապ թագավոր փ. - Հանրապետության հր. - Տ.Մեծի - Արցախի պ-ներ - Էրեբունու - Աթոյան - Այվազովսկու - Ավանեսովի փ-ներ - Էրեբունու զ/ծ (վ.կ.) Հետադարձը՝ նույնը մինչև Հանրապետության հրապարակ-Նալբանդյան-Մոսկովյան, շարունակությունը նույն ուղեգծով	43	135	19.1	11	13	12/13	11/8/4 9/6/3	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն
33	ԴԱՎԹԱՇԵՆ - ՆՈՐԱԳԱՎԻԹ- ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ Դավթաշենի 4-րդ թաղ. (ս.կ.) - Տ.Պետրոսյան - Իոսիֆյան - Հալաբյան - Լենինգրադյան փ-ներ - Ծիծեռնակաբերդի խճ. - Աթենքի փ. - «Հաղթանակ» կ-ջ - Արգիշտիի - Իտալիայի - Խորենացու փ-ներ - Մաշտոցի պ. – Պապ թագավոր փ. - Հանրապետության հր. - Տ.Մեծի - Արցախի պ-ներ - Գ.Նժդեհի փ. - Արշակունյաց պ. - Նորագավթի 1-ին փ. - Արտաշատի խճ. - գ.Խարբերդի ամառանոցներ – Խարբերդի 1- ին փ. – Խարբերդի 30-րդ փ. (էլ.ենթակայան) (վ.կ.): Հետադարձը՝ նույնը մինչև Մաշտոցի պողոտա - Խորենացու - Բեյրութի - Արգիշտիի փ-ներ - այնուհետև գործող ուղեգծով:	69	185	23.0	15	17	12/13	15/11/5 12/8/3	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն

2.Հանձնարարել Երևան քաղաքի ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Երևանի ներհամայնքային միկրոավտոբուսային հ.հ.6,14,22,33 երթուղիների համալրման աշխատանքների իրականացումը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ